ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/63» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Նիստի անցկացման՝
-վայրը՝Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 26.04.2019թ.
-ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մաթևոսյանը, Ա. Խաչատրյանը, Ռ. Վարդևանյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը
Բացակայում է՝ Ա. Թամրազյանը

1. Հայտերի բացման մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի ապրիլի 26-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/63» ծածկագրով գնանշման հարցման հրավերին էլեկտրոնային համակարգով /www.armeps.am/ առգիծ հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«Լայմ Տեխ» ՍՊԸ

2. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գին	«Լայմ Տեխ» ՍՊԸ		
			Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	հերթերի կառավարման համակարգ	650000	630000	126000	756000

Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

3.1. Մասնակցի կողմից ներկայացված և բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են.

3.2. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Լայմ Տեխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված է մի անձի կողմից (Զոպունյան Արտակ), ում էլեկտրոնային ստորագրությունը չի նույնականացվում ընկերության տնօրենի ստորագրության հետ և առկա չէ փաստաթուղթ (լիազորագիր), որը հավաստում է, որ տվյալ անձն իրավասություն ունի «Լայմ Տեխ» ՍՊԸ-ի տնօրենի անունից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատելու փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, որոշեց մերժել «Լայմ Տեխ» ՍՊԸ-ի հայտը և «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնման ընթացակարգը հայտարարեց չկայացած:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Ս. Ներսիսյան
Անդամներ՝		Ե. Մաթևոսյան
		Ա. Խաչատրյան
		Ռ. Վարդևանյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան